ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» 09 2015 թվական N 196-Ա քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՅԱԴ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատի գյուղական համայնքի ղեկավար Սայադ Խաչատրյանը, խախտելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի պահանջները, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 26.0 հեկտար մակերեսով վարելահողերը առանց վարձակալության պայմանագրերի և պետական գրանցման օգտագործման են տրամադրվել թվով 60 քաղաքացիների, իսկ 7.2 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասերը աճուրդ վաճառքի միջոցով օտարվել են թվով 26 քաղաքացիների, սակայն պետական գրանցում չեն ստացել և օգտագործվում են վերջիններիս կողմից, այսինքն՝ կատարել է Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 56[1]-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված խախտում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության (այսուհետ՝ Տեսչություն) «Հողերի օգտագործման և պահպանման խախտումների» 2015 թվականի հուլիսի 30-ի N 04 ակտը և Տեսչության պետի 2015 թվականի օգոստոսի 21-ի N 04 որոշմամբ արված միջնորդությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 244[9]-րդ, 281-283-րդ հոդվածների, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատի գյուղական համայնքի ղեկավար Սայադ Խաչատրյանի նկատմամբ նշանակել 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանք, որը ենթակա է մուծման Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 900005243119 հաշվարկային հաշվին՝ 15 օրվա ընթացքում:
2. Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում ուղարկել Սայադ Խաչատրյանին:
3. Սույն որոշումը կարող է գանգատարկվել դատական կարգով տասն օրվա ընթացքում:

Ֆ. ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ՝ճիշտ